ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2024 թվականի N 4616-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և 42-րդ կետերով, հաշվի առնելով, որ ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/60 ծածկագրով գնման ընթացակարգը 4-րդ, 10-րդ, 11-րդ, 19-րդ, 22-րդ և 29-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 05 հունիսի 2024 թվականին՝ **որոշում եմ.**

1. <<Սերվիս Լենդ>> ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու պարտավորության չկատարման հիմքով (շտկման ծանուցումն ուղարկվել է 03 հունիսի 2024 թվականին) ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

14 ՀՈՒՆԻՍԻ 2024 թ.
Ք.ՄԱՍԻՍ